ԴԱՆԻՇՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

XI դ. Հայաստան ներխուժած սելջուկ ցեղերի վայրագություններից փրկվելու նպատակով և Բյուզանդական կայսրության՝ Հայաստանը հայ ավատատերերից ու ռազմիկներից դատարկելու կարճամիտ քաղաքականության պատճառով բազմաթիվ հայեր գաղթեցվեցին Ասորիք, Կիլիկիա և Կապադովկիա։ Ընդամենը երկու և կես տասնամյակի ընթացքում վերացվեցին հայկական հիմնական թագավորությունները՝ Արծրունյաց (1021) և Անիի Բագրատունյաց (1045)[1]։

Հայաստանի համար այս ողբերգական իրադարձությունները պետք է որոշակի հետևանքներ ունենային նաև այն երկրամասերում, ուր գաղթում էին հայերը և գաղթում էր ոչ միայն աշխատավոր բնակչությունը, այլև ավատատերերը, զինվորականությունը։ Գաղթողների հետագա ճակատագրի համար կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն այն փաստը, որ Բյուզանդական կայսրությունը սկզբում ստիպված ճանաչում էր հայ ավատատերերի իրավունքներն իր իսկ տրամադրած մարզերի վրա, այլև այն, որ այդ տարածքներում առկա էր նաև բնիկ հայ բնակչություն։

Կայսրության հարավ-արևելյան սահմանները պաշտպանելու համար գաղթեցված հայերը ոչ միայն կատարեցին այդ դերը, այլև ստեղծեցին մեծ ու փոքր մի շարք իշխանություններ, որոնք հաճախ դիմադրություն էին ցույց տալիս նաև կայսրությանը[2]։

Հայկական նորաստեղծ իշխանությունների ճակատագրերը տարբեր եղան։ Դրանց մի մասը սելջուկների, Բյուզանդիայի կամ խաչակիրների հարվածների ներքո, անհավասար պայքարում ընկան, մյուսները միավորվելով հիմք դրեցին Կիլիկիայի հայկական պետությանը, որը գոյատևեց մի քանի հարյուրամյակ և հսկայական հետք թողեց մեր ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմության մեջ։ Եղան նաև այնպիսիք, որոնք, հանգամանքների բերումով, բռնեցին կրոնական, ապա նաև ազգային-մշակութային ուծացման ուղին և հայ ու օտար պատմագիտության կողմից դիտվել ու դիտվում են իբրև սելջուկյան պետականության ներկայացուցիչներ։ Այդպիսի իշխանություններից էր Փոքր Հայքում, Սեբաստիայում, Մալաթիայում XI դ. երկրորդ կեսին հաստատված Դանիշմանյանների ամիրայությունը, որի հիմնադիրը եղավ մահմեդականություն ընդունած Ահմեդ Տայլուն կամ Տիլոն[3]։ Հայտնի է, որ այս իշխանությունը ստեղծվեց սելջուկյան պետության քայքայման շրջանում և նրա հիմնական հպատակները XI դ. Սենեքերիմ Արծրունու հետ Սեբաստիա գաղթած հայերն էին, ինչպես նաև Գագիկ II-ի ու Կարսի Գագիկ Բագրատունու հետևորդները, որոնք գաղթել էին Պիղա և Ծամնդավ[4]։

Դանիշմանյանների իշխանության պատմությունը չափազանց վատ է ու-

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 143, 153։

2 Նույն տեղում, էջ 507—508։

3 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Հայ Կեսարիոյ, Ա, Գահիրե, 1937, էջ 481—487, Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարի հաշորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 8, էջ 65—79), Հ. Պերպերյան, Դանիշմենտանմեն, Տանիշմէնտը և հայերը («Անդաստան», 1931, № 12, էջ 65—76)։

4 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 505, Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 494։

սումնասիրված, և դա ոչ միայն այն պատճառով, որ միջնադարյան աղբյուրները բավական կցկտուր տեղեկություններ են հաղորդում այդ իշխանության վերաբերյալ։ Բանն այն է, որ XIII դ. կեսերին, երբ վաղուց արդեն վերացված էր Դանիշմանյանների հարստությունը և այդ իշխանության իրական պատմությունը մեծապես աղճատվել էր, բանավոր զրույցների շնորհիվ, ոմն Մեվլանա իբն Աշա ստեղծում է «Տանիշմենտամե» կոչված դյուցազնավեպը։ Գրավոր աղբյուրների բացակայության պայմաններում գեղարվեստական այս երկը օտար պատմագիտության կողմից հաճախ դիտվել է իբրև իրական պատմություն, փոխանակ օգնելու ավելի խճճելով Դանիշմանյան տոհմի ու նրանց իշխանության իրական պատմությունը։ Մանավանդ որ չի պահպանվել իբն Աշայի ստեղծած երկի բնագիրը և ժամանակակից գիտությանը հասել է միայն նրա XIV դ. թուրքերենով կատարված խմբագրությունը[5]։

Հարցի լուսաբանման համար առավել արժանահավատ են հայկական ու չեղոք աղբյուրները, որոնց մեջ առաջնությունը պատկանում է ժամանակով ու միջավայրով իրադարձություններին մոտ գտնվող Մատթեոս Ուռհայեցուն։ Վերջինս Ահմեդ Տայլուի որդու՝ Ահմեդ Կյումյուշթեկին Դանիշմեդի, մահվան առթիվ խոսում է նաև նրա ծագման մասին, նշելով հետևյալը. «Ցայսմ ամի ՇՄԳ (1104) մեռաւ Դանիշմանն Մեծ՝ ամիրայն Հոռոմոց աշխարհին, որ լեալ էր յազգէն Հայոց, այր բարի և շինող աշխարհի և էր յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի, և եղև սուգ մեծ ի վերայ հաւատացելոցն, որք էին ընդ ձեռամբ նորա...»[6]։ Նույնը, թեև ոչ այդքան որոշակիությամբ, վկայում է Վարդան Արևելցին. «Ի հինգհարիւր քառասուն և ինն թուին (1100) Դանիշմանն՝ տէրն Սեբաստիոյ, զորմէ ասէն յազգէն Հայոց, եկեալ ի վերայ Մելտենոյ»[7]։ Վարդան Արևելցու հոգնակի թվով օգտագործած «զորմէ ասէն» արտահայտությունը թույլ է տալիս ենթադրելու, որ նրա ձեռքի տակ բացի Մատթեոս Ուռհայեցուց եղել են նույնը վկայող այլ աղբյուրներ ևս։

Բյուզանդական աղբյուրներում Դանիշմանյանները ոչ միայն անվանված են հայեր կամ պարսկահայեր, այլև նրանց վերագրված է Արշակունյաց ծագում։ Վերջին հանգամանքն արժանի է հատուկ ուշադրության, թեև դրա պատմական արժանահավատությունը չի կարելի հիմնավորված համարել։ Սակայն հենց այն փաստը, որ Դանիշմանյանները ձգտել են իրենց ներկայացնել Արշակունիներ, որոնց մասին հիշողությունն առավելապես ուժեղ էր հայկական շրջանակներում, ավելի հավանական է դարձնում նրանց հայկական ծագումն ու պարսկահայ անվանումը և հասկանալի դարձնում հայկական զանգվածներին իրենց իշխանության հիմնական հենարանը դարձնելու նրանց քաղաքականությունը[8]։

Աղբյուրների նման սղության պայմաններում որևէ նոր փաստ, ընթերցում կամ դիտարկում ոչ միայն կարող է նոր լույս սփռել այս իշխանության ծագման վրա, այլև փոխել մեր պատկերացումներն ընդհանրապես, մանավանդ,

---

5 Հ. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 66։

6 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 297։

7 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 112։

8 «...Քանզի այն ժամանակ (1134 թ.) կապադովկացոց երկրի տիրակալ պարսկահայ (Περσαρμένιος) Տանիսմանիոսը հզոր բանակով հարձակվելով, պարսամարտությամբ գրավեց Կաստամոնա քաղաքը և սրի քաշեց պահապան հռոմայեցիներին («Nicetae Choniatae Historia", recensuit Ioannes Aloysius van et Novi Eboraci, Berlin, 1975, p. 19). Մի այլ առիթով Նոնիատեսը հաղորդում է, որ «Կեսարիայի այն ժամանակվա տիրակալ Մուհամեդը, որի մասին վերևում խոսեցինք, շատ հզոր էր՝ նա իրեն էր ենթարկել Իրերիայի մի մասը և Միջագետքի մի քանի շրջաններ։ Եթե վազ անցյալը նկատի ունենանք, նա սերում էր Արշակունիներից, իսկ եթե մոտ անցյալը՝ Դանիշմանյաններից» (նույն տեղում, էջ 34)։ Բերված հատվածները մեզ համար սիրահոժար թարգմանել է Հ. Բարթիկյանը, որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում։

եթե նկատի առնենք, որ ինչպես թուրքական ու եվրոպական պատմագիտությանը, այնպես էլ հայագիտությանը՝ հայերի հետ Դանիշմանյանների հարաբերության հարցում հիմնականում զբաղեցրել են երկու խնդիր՝ Դանիշմանյանների ծագումը և նրանց վերաբերմունքը հայերի նկատմամբ։

Հայագիտության մեջ փորձ է արվել ստեղծելու այս իշխանության թեկուզ և հակիրճ գիտական պատմությունը կամ ուսումնասիրել դրա առանձին դրվագներ։ Այս գործում առավել նշանակալից են Ա. Ալպոյաճյանի, Ս. Երեմյանի և Հ. Պերպերյանի ծառայությունները[9]։ Հակիրճ լինելու համար, նշենք վերոհիշյալ հեղինակների միայն կարևոր եզրակացությունները։ «Ինչ որ ալ ըլլա իր ծագումը,—գրում է Ա. Ալպոյաճյանը,—թուրքման, հայ, կամ վրացի, համենայն դեպս Ահմատ Տայլու, պետք է անվարան հայտարարենք, թեև հարկադրանքի տակ թերևս իսլամացող, իր նախկին հավատակիցներուն նկատմամբ բարյացակամ եղած է, թերևս համոզյալ մը չըլլալու՝ (մահմեդական— Լ. Բ.) համար»[10]։ Ս. Երեմյանը, մանրամասն քննելով Լիպարիտյանների տոհմի պատմությունը և զուգահեռներ գտնելով Լիպարիտ իշխանի որդու՝ Ռատի և Դանիշմանյանների տոհմի հիմնադրի գործունեության միջև, եզրակացրել է, որ Դանիշմանյան տոհմի հիմնադիրը վերոհիշյալ Ռատն է՝ վրաց Լիպարիտ իշխանի որդիներից մեկը[11]։ Ինչ վերաբերում է Հ. Պերպերյանին, ապա նա, Դանիշմանյաններին վերագրված հակահայկական գործունեությունը հիմնավորապես ժխտելով հանդերձ, ցավոք չի անդրադառնում վերջիններիս ծագման խնդրին, թեև խոստանում է դրան հատուկ ուսումնասիրություն նվիրել[12]։

Օտար ուսումնասիրողները ևս գալիս են այն համոզման, որ Դանիշմանյան տոհմի ծագումը թյուրքական լինել չի կարող։ Այդ առումով բավական հետաքրքիր են թուրք պատմարան Յենանչի որոշ դիտարկումները, որոնց վրա ուշադրություն են դարձնում նաև սովետական արևելագետները։ Յենանչը, նկատի առնելով Դանիշմանյանների դրամների վրա ցեղական տամղայի՝ տոհմանշանի, բացակայությունը, բացառում է նրանց թյուրքական ծագումը։ Ուշագրավ է նաև նույն հեղինակի այն եզրակացությունը, թե անկախ իրենց ազգային պատկանելությունից, շատ հավանական է, որ Դանիշմանյանները ծագած լինեն ոչ թե նշանավոր տոհմից, այլ երկրորդական ծառայողական դասից[13]։ Այս եզրակացությունը համահնչուն է նաև պատմական տրամաբանությանը և հավասարապես վերաբերում է նրանց քրիստոնեական ծագման տեսակետին, քանզի, եթե Դանիշմանյանները սերած լինեին հայ կամ վրաց նշանավոր ավատատիրական տներից, ապա այդ մասին պետք է որ հիշողություններ պահպանվեին ժամանակակիցների մոտ, որոնք, շեշտելով նրանց հայկական ծագումը, որևէ ակնարկ չեն անում վերջիններիս տոհմի մասին։

Ինչ վերաբերում է Ս. Երեմյանի վարկածին, ապա այն առավել քիչ հավանական է, քանզի նույն Լիպարիտին Մատթեոս Ուռհայեցին քաջ գիտենալով հանդերձ, որևէ ակնարկ չի անում նրա ու Դանիշմենդի առնչությունների մասին, թեև նրան հայտնի է նաև, որ «եղև առաջնորդ զօրացն անօրինաց որդին Լիպարտին միաբանեալ ընդ նոսա»[14]։ Ավելին. Գոհարինյանց վկայաբանության առիթով Ռատիոս անունը նույնացնելով Ռատ անվան հետ, Գոհարինյանները պետք է որոշակիորեն կապվեին Լիպարիտյանների հետ, սակայն դա անհնար է, քանզի Գոհարինյանների մասին պարզ վկայված է, որ նրանք հայեր էին[15]։

Վերջապես ամենակարևորն այն է, որ, ինչպես նշվեց, Դանիշմանյաններն իրենց թողարկած դրամների վրա տոհմական որևէ նշան չեն արել։ Այստեղ չա-

---

9 Տե՛ս Ա. Ալպոյաճյանի, Ս. Երեմյանի և Հ. Պերպերյանի վերը նշված աշխատությունները։

10 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 486։

11 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 68։

12 Հ. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 67։

13 Դ. Երեմեև, Թուրքերի ծագումնաբանությունը, Երևան, 1975, էջ 141—142։

14 Մատթեոս Ուռհայեցի, էջ 128։

15 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 1396։

փաղանց տեղին է հնչում բյուզանդագետ Ֆ. Շալանտոնի հետևյալ արժեքավոր եզրակացությունը. «Հին հայկական հարստության ներկայացուցիչները մեծ մասամբ թշվառությամբ անհետացած ըլլալով, երկրորդական զանազան պետեր հաջողեցան իրենց ազդեցությունը աճեցնել»[16]։ Իհարկե, այդ հանգամանքը ձեռնտու էր բյուզանդական կայսրությանը և թելադրված էր նրա շահերով, որովհետև կհեշտացներ հայերի տարալուծումը, սակայն, ինչպես ասվեց, Բյուզանդիայի հաշիվներն ի դերև ելան այն պարզ պատճառով, որ կայսրությունը թուլացել էր և ստեղծված իշխանությունները շուտով ձգտեցին ինքնիշխանության կամ ստիպված եղան ընդունելու սելջուկների գերագահությունը։ Ամենայն հավանականությամբ դրանցից մեկն էլ Դանիշմանյանների իշխանությունն էր։

Առաջին և թերևս ամենակարևոր խնդիրը, որ կարող է բանալի ծառայել Դանիշմանյանների պատմությունը ճիշտ գնահատելու համար, այս իշխանության վերաբերմունքն է Կապադովկիայի քրիստոնեական խառը բնակչության և շրջակա հայկական, բյուզանդական ու խաչակիրների իշխանությունների նկատմամբ։ Հայտնի է Դանիշմանյանների բացահայտ թշնամանքը Բյուզանդիայի ու խաչակիր իշխանությունների նկատմամբ, որն էլ, հավանաբար, ի վերջո հանգեցրեց առասպելախառն «Տանիշմենտնամեի» երևան գալուն։ Այս իշխանությունն ի սկզբանե անհաշտ թշնամություն էր տածում և՛ խաչակիրների, և՛ բյուզանդացիների նկատմամբ, հաճախ ծանր պարտությունների մատնելով նրանց։ Զափազանց ուշագրավ է նաև այն փաստը, որ այս իշխանական տունը նույն վճռականությամբ պայքարում էր նաև թյուրքական իշխանությունների դեմ. «Եւ զօրացեալ Ամիր Խազի ջնջեաց զԹուրքսն, որ կային երկրին Կապադովկացւոց և ինքն միայն թագաւորեաց»[17]։ Այս տեղեկությունը կարևոր է նաև այն պատճառով, որ մասամբ բացատրում է Դանիշմանյանների քաղաքականությունը շրջակա մահմեդական իշխանությունների նկատմամբ։

Խոր թշնամություն տածելով Բյուզանդիայի և խաչակիրների նկատմամբ, Դանիշմանյանները սելջուկներին ոչ միայն թույլ են տալիս իրենց տարածքի վրայով անցնելու և գրավելու Իկոնիան ու փոքրասիական այլ մարզեր՝ ի հաշիվ Բյուզանդիայի, այլև բավական ժամանակ սատար են լինում Իկոնիայի սուլթանությանը, վերջինիս երբեմն ժամանակներում, թեև, ինչպես ասվեց, վերացնում են թյուրքական բոլոր իշխանություններն իրենց գրաված տարածքում։ Այս փաստը ցույց է տալիս, որ Դանիշմանյանները ձգտում էին թյուրքական ուժերն օգտագործել խաչակիրների ու Բյուզանդիայի դեմ, թեև այդ քաղաքականությունն ի վերջո հանգեցրեց նրան, որ նրանց իշխանությունը կուլ գնաց Իկոնիայի սուլթանությանը։ Մինչդեռ հայկական իշխանությունների նկատմամբ ոչ միայն այդպիսի բացահայտ թշնամանք չի նկատվում, այլև հաճախ դիտվում է նաև համագործակցում։ Իրենց գործունեության ողջ ընթացքով Դանիշմանյան իշխանները կարծեք գալիս են հաստատելու նրանց տոհմի հիմնադիր Ահմետ Տայլրի մասին Մ. Չամչյանի տված այն տեղեկությունը, ըստ որի «Զայսու ժամանակաւ և իշխան ոմն հայոց նեղեալ ի յունաց, գնաց ի Պարսս և ուրացեալ զհաւատս՝ ընկալաւ յարքայէն պարսից զիշխանութիւն կուսակալութեան սահմանացն Սեբաստիոյ և յունական կողմանց, և կարգեցաւ Դանիշման. զոր և յիշեն Նիկետաս և Սիննամոս»[18]։

Սակայն եթե միջֆեոդալական պայքարի բովում այս իշխանությունը երբեմն բախվում էր նաև հայկական իշխանությունների հետ, ապա հայ բնակչության նկատմամբ Դանիշմանյանների ընդգծված բարյացակամ տևական վերաբերմունքը թույլ է տալիս ասելու, որ նրանց մոտ ոչ միայն պահպանվում էր հիշողությունն ազգային պատկանելության մասին, այլև Դանիշմանյանները, առերես ընդունելով մահմեդականություն, իրենց կապերը չէին կըտ-

---

16 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 477։

17 «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի ասորւոց պատրիարգի», Երուսաղէմ, 1871, էջ 413։

18 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 24։

ռել քրիստոնեությունից և, ըստ էության, ձգտում էին իրենց իշխանության տնտեսական ու քաղաքական հենարան դարձնել առաջին հերթին հայրենակից հայերին։

Դանիշմանյան էմիրներից թերևս բացառություն է կազմում Ղազի Պեն Մուհամեդ Կիմուշթեգինը, որի մասին Միքայել Ասորին վկայում է, թե «էր նա ատեցող քրիստոնէից և կայր նա օրինօք տաճկաց, գինի ոչ ըմպէր և վայրապար տչ գնար ի վարս իւր»[19]։ Մանավանդ որ, հենց իր իշխանանիստ Կեսարիայում «քակեաց բազում եկեղեցիս»[20]։

Կարելի է կարծել, թե հայ ժողովրդի պատմության տղբերգական արաբներից մեկը ևս ավարտված է և կարելի է վարագույրն իջեցնել։ Սակայն առկա փաստերն ուրիշ պատկեր են ներկայացնում և մղում լուրջ խորհրդածություններին։ Նախ, ինչպե՞ս հասկանալ, որ պատմիչները Դանիշմանյան հարբստության բոլոր ամիրաներից հարկ են համարում հատուկ առանձնացնել Ամիր Մուհամեդ Ղազիին, իբր «կայր նա օրինօք տաճկաց»։ Եթե պատմիչները համոզված չլինեին նրա տոհմի հայկական ծագման մեջ կամ տարբերություն չդնեին նրա և իր նախորդների ու հետնորդների գործունեության միջև, ապա ինչո՞ւ պետք է նշեին Մուհամադ Ղազիի «օրինօք տաճկաց» լինելը, ուրիշ ի՞նչ «օրինօք» կարող էր լինել թյուրք իշխանը։

Առավել ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Մուհամեդ Ղազիի որդու՝ Ծաղուբ Արսլան ամիրայի գործունեության վերաբերյալ։ Վերջինիս օրոք Իկոնիայի սելջուկների հետ հարաբերությունները չափազանց սրվում են և Իկոնիայի հողերից Դանիշմենդը տեղափոխում է 70 հազար քրիստոնյաների. «առեալ յերկիրն ամենայն ոգիս իբրեւ եօթանասուն հազար, ոչ գերութեամբ, այլ ամրացուցեալ յերկիրն իւր»[21]։ Բացի այդ, թշնամու հետ հաշտության բանակցություններ սկսելիս նա հիմնական պայման է դնում իր տարած քրիստոնյաներին, որոնց մեծ մասը հայեր էին, չվերադարձնելը։

Իհարկե, միայն այսքանը հազիվ թե հնարավորություն տար նոր բան ասելու Դանիշմանյանների ծագման մասին, քանզի այդ շրջանում եղակի չեն դեպքերը, երբ առանձին մահմեդական տիրակալներ այս կամ այն պատճառով սիրաշահում էին քրիստոնյաներին, մանավանդ հայերին, իբրև հմուտ ռազմիկների, արհեստավորների, առևտրականների և ձգտում իրենց կողմը գրավել նրանց համակրանքը։ Բայց հենց այս ամիրայի մասին պատմությունը վկայել է այնպիսի կարևոր մի փաստ, որն անտեսելը ոչ միայն անհնար է, այլև՝ անհրաժեշտություն է առաջացնում նորովի մեկնաբանելու մինչև այժմ Դանիշմանյանների մասին եղած փաստերն ու տեղեկությունները։ Ահա այդ փաստը, հաղորդված մահմեդական հեղինակի՝ Իբն այլ Ասիրի, կողմից, որը դուրս է մնացել մասնագետների ուշադրությունից։ Իբն ալ Ասիրը գրում է. «Այս տարում (նոյեմբեր 1164—նոյեմբեր 1165—է. Բ.) թշնամություն ընկավ Իկոնիայի և Ռումի երկրից իրեն հարևան հողերի տեր ալ-Մալիք Կիլիջ Արսլան իբն Մասուդ իբն Կիլիջ Արսլանի և Մալաթիայի ու Ռումի այլ մասերի տէր Յաղի Արսլան իբն Դանիշմանդի միջև և սաստիկ պատերազմ տեղի ունեցավ։ Բանն այն է, որ Կիլիջ Արսլանը ամուսնացել էր ալ Մալիք Սալգուկ իբն Ալի իբն Աբու-լ-Կասիմի դստեր հետ։ Հարսը տարվեց Կիլիջ Արսլանի մոտ մեծ օժիտով, որի արժեքը չգիտենք։ Մալաթիայի տէր Յաղին հարձակվեց նրա վրա, հափշտակեց հարսին իր ամբողջ ունեցվածքով, և կամեցավ ամուսնացնել նրան իր եղբորորդու՝ Զու-լ-նուն իբն Մուհամմադ իբն Դանիշմանդի հետ։ Նա հրամայեց հարսին հրաժարվել մահմեդականությունից և ամուսնացրեց իր եղբորորդու հետ»[22]։ Փաստն այնքան արտառոց է, որ առաջին պահին գրեթե անիրական է թվում, քանզի, եթե շարունակենք Դանիշմանյանների ընտանիքը հա-

---

19 Միքայել Ասորի, էջ 484։

20 Նույն տեղում։

21 Մատթեոս Ուռհայեցի, էջ 409։

22 «Իբն ալ Ասիր», աշխատասիրությամբ, թարգմանությամբ և ծանոթագրություններով Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 261։

մարել մահմեդական, ապա նման փաստը պետք է խոպառ բացառվեր։ Այս փաստի կողքին բոլորովին նոր մեկնություն է ստանում մինչև այժմ տարակույս հարուցող այն իրողությունը, որ նույն այս Ցաղուբ Արսլան ամիրայի Եղբորորդիները դրամներ են հատում Քրիստոսի ու Աստվածամոր պատկերներով, ըստ որում դրամի վրա պատկերված է Քրիստոսը՝ աջը դրած Ամիրայի գլխին, իսկ վերջինս դրամի հունարեն արձանագրության մեջ անվանված է Քրիստոսի ծառա[23]։ Արդ, ինչպե՞ս բացատրել այս լուրջ հակասությունները, երբ ամիրաները և նրանց անունները մահմեդական են, իսկ նրանց գործունեությունը երբեմն ընդգծված հակամահմեդական ուղղվածություն ունի։ Կարծում ենք այստեղ բավարար չէ վաստակաշատ գիտնական Ա. Ալպոյաճյանի այն եզրակացությունը, թե Դանիշմանյանները համոզված մահմեդական չեն եղել[24]։ Առավել հավանական է, որ Դանիշմանյանների համար մահմեդականությունը միայն քող է եղել և այն առավելապես վերաբերել է պետության ղեկավարին, իսկ արքունիքը մնացել է քրիստոնյա։ Ուշագրավ է, որ Դանիշմանյան ամիրաներից նույնիսկ ամենամահմեդական ամիրայի՝ Մուհամեդ Ղազիի իշխանության օրոք նրանց իշխանության ներքո եղել են տեղական նշանակության այլ հայ իշխաններ ևս, որը փաստվում է Գոհարինյանց նահատակությամբ։ Այստեղ ևս զուգահեռաբար նույն վիճակն ենք տեսնում, երբ ընտանիքի հայրը՝ հայ իշխանը, որը Դանիշմանյանների վասալն է, իր ավագ որդու հետ մահմեդականություն է ընդունել, իսկ ողջ ընտանիքը մնացել է քրիստոնյա, և մահմեդականություն ընդունած եղբայրն ամեն կերպ հովանավորել է իր քրիստոնյա եղբայրներին, որոնք Դանիշմանյանների բանակի հրամանատարներ էին[25]։ Ի միջի այլոց, պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ որոշ ուսումնասիրողներ, թեև այլ առիթով, նկատել են հայերի և հայկական որոշ իշխանությունների դրական վերաբերմունքը Դանիշմանյանների նկատմամբ։ Ինչպես նշում է «Տանիշմենտամեի» ֆրանսերեն թարգմանության հեղինակ Ի. Մելիքովը, «քննելով Էմիր Տանիշմենտին պատմությունը, բացահայտորեն կտեսնվի, թե քրիստոնյաներում, մասնավորաբար հայերում մասնակցությունը շատ նպաստած է անոր հաջողությանց... Տանիշմենտ բարեկամական հարաբերություններ կպահեր Գող Վասլի հետ... և բարեկամության դաշինք կնքեց անոր հետ»[26]։

Քրիստոնեական արքունիքի պայմաններում իշխանի մահմեդականության ձևական պահպանումը հավանաբար թելադրված է եղել շրջակա մահմեդական իշխանություններին իրենց դեմ չգրգռելու նկատառումներով, երբ առանց այն էլ նրանք ստիպված էին ամենօրյա ծանր պայքար մղելու ինչպես Բյուզանդական կայսրության, այնպես էլ խաչակրաց իշխանությունների դեմ։ Նկատի պետք է առնել նաև, որ ոչ միայն Կապադովկիայում հաստատված հայ ավատատերերը, այլև հայ քաղաքաբնակչությունը, որ այս շրջանում թվական գերակշռություն ուներ, խաչակիրներից ծայրահեղորեն դժգոհ էր՝ Արևելքի քրիստոնյաների համար նրանց անսովոր բարքերի և կատարած խժդժությունների պատճառով, ինչպես և Բյուզանդիայից՝ վերջինիս հակահայկական քաղաքականության համար։

Իհարկե աղբյուրների սղության պատճառով, նույնիսկ այսպիսի բացահայտ փաստերի առկայության պայմաններում, դժվար է շատ հեռուն գնացող եզրակացություններ անել, սակայն, կարծում ենք, որ Դանիշմանյանների ոչ միայն և ոչ այնքան ծագումը, այլև երկրամասի հայկական զանգվածներին իրենց շուրջը համախմբելու և իրենց իշխանության հիմնական հենարանը դարձնելու միտումը, ինչպես նաև մինչև XII դ. վերջերը, այսինքն մինչև այդ իշխանության կործանումը, նրանց արքունիքում պահպանված քրիստոնեա-

---

23 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 579—580։

24 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 486։

25 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1338, Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 69։

26 Հ. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 68—69։

կան ավանդույթները թելադրում են մտածելու, որ այս իշխանության պատմությունը չի կարող դիտվել իբրև սելջուկյան։

К ИСТОРИИ КНЯЖЕСТВА ДАНИШМАНОВ

ЭДВАРД БАГДАСАРЯН

Резюме

В середине XI в. в Киликии и Кападокии образовался ряд армянских княжеств, часть которых впоследствии была присоединена к Киликийскому армянскому царству. Другие были ликвидированы в неравной борьбе с сельджуками, крестоносцами и Византией. Одним из таких княжеств было княжество Данишманов, образованное в середине XI в. в Малой Армении: Себастии и Малатии. Его основал принявший мусульманство армянин Ахмад Тайлу. Несмотря на противоречивые данные первоисточников, в исторической литературе это княжество безоговорочно считается сельджукским, в то время как тщательный анализ византийских, армянских, сирийских и арабских источников приводит к убеждению, что до своего падения Данишманское княжество в конце XII в. не только поддерживало связь с соотечественниками и единоверцами—армянами, но и старалось сделать их политической, экономической и военной опорой княжества. Хотя в политических целях данишманские князья приняли мусульманство, они чеканили монеты с христианскими символами, а двор оставался христианским.